ՆՈՐ ՆՅՈՒԹԵՐ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ՇՐՋԱՆԻ ՊԱՏՄԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ա. Ա. ՔԱԼԱՆԹԱՐՅԱՆ

1969 թ. հուլիսին հուշարձանների վերականգնման հատուկ գիտաարտադրական արվեստանոցի արշավախումբը հետազոտական աշխատանքներ կատարեց Թումանյանի շրջանում։ Արշավախումբը ուսումնասիրեց շուրջ 75 հուշարձան և կազմեց Դսեղ, Ջկալով, Մարց, Լորուտ, Շամուտ, Աթան, Ահնիձոր գյուղերի շրջապատում գտնվող հուշարձանների արձանագրերը (նյութերը պահպանվում են ՀՍՍՀ պետշինի հուշարձանների պահպանության և վերականգնման վարչությունում)։

Թումանյանի շրջանը պատմա-ճարտարապետական հուշարձանների հարստությամբ մեր հանրապետությունում առաջնակարգ տեղ է գրավում։ Դեռևս մ. թ. ա. երկրորդ հազարամյակում շրջանի տարածքը խիստ բնակեցված է եղել։ Այդ շրջանից պահպանվել են ամրոցներ, բնակավայրեր, դամբարանադաշտեր և այլ հուշարձաններ, որոնց մի մասը պեղվել են և տվել հնագիտական հարուստ նյութեր։

Միջին դարերում Գուգարքը մտնում էր Կյուրիկյան թագավորության մեջ, իսկ հետագայում այն անցնում է Զաքարյաններին։ Այդ շրջանում կառուցվել են ճարտարապետական եզակի կոթողներ, վանական համալիրներ, ամրոցներ, եկեղեցիներ և կամուրջներ (Հաղբատ, Սանահին, Ախթալա, Քոբայր և այլն)։

XI—XII դդ. Լոռիում հաստատվում է Մամիկոնյան նախարարական տան մի ճյուղը, որը բուռն շինարարական գործունեություն է ծավալում։ Նրա ենթակայության տակ էր գտնվում ներկայիս Դսեղի և Մարցի ձորի ողջ տարածքը, որտեղ և պահպանվել են շինարարական և նվիրատվական բազմաթիվ արձանագրություններ, կառույցներ և այլ հուշարձաններ (բարձրաքաշ ս. Գրիգոր վանքը, Իգատակի եկեղեցին և այլն)։

Արշավախմբի հետախուզած հուշարձանները հիմնականում բաժանվում են երեք խմբի. ա) Բրոնզեդարյան հուշարձաններ (ամրոցներ, առանձին կառույցներ, դամբարանադաշտեր)։ բ) Միջնադարյան հուշարձաններ՝ X—XIII դդ. (համալիրներ, խաչքարեր, գյուղատեղիներ)։ գ) Ուշ միջնադարյան հուշարձաններ՝ XIV—XVII դդ. (գյուղատեղիներ, գերեզմանոցներ, խաչքարեր և այլն)։

Հնագույն բրոնզեդարյան բնակավայր հանդիպեց Լորուտ գյուղում։ Մի քանի տարի առաջ, կաթի գործարանի շինարարության ժամանակ, պատահականորեն բացվել էին դամբարաններ, որոնք ոչնչացվել էին շինարարների կողմից։ Տեղում պարզվեց, որ նյութերի (կավանոթներ) մի չնչին մասը գտնվում է Թումանյան բանավանի թանգարանում և Լորուտի դպրոցում։ Դամբարանադաշտի կտրվածքը ցույց տվեց, որ այն բազմաշերտ է և թվա-

գրվում է մ. թ. ա. 3-րդ հազարամյակի սկզբով, 1-ին հազարամյակի կեսերով։ Հայտնաբերված իրերի մեջ մեծ քանակություն են կազմում սև, փայլեցրած կավանոթների բեկորները՝ ոլորաձև զարդերով, յուրահատուկ կանթերով և կետազարդերով, որոնք թվագրվում են վաղ բրոնզի ժամանակաշրջանով։ Խիստ հետաքրքրական են կավե անոթների թրծման համար պատրաստված կլոր հնոցները, որոնց մնացորդները տեղում պահպանվել են։



Նկ. 1

Դամբարանադաշտը գտնվում է գետի աջ ափին, մի բարձրադիր բլրի վրա։ Տեղում բնակավայրի հետքեր չկան, սակայն մոտ 300 մ դեպի հյուսիս, մի առանձին բլրի վրա պահպանվել են շինության հիմնապատեր (չափագրված է), որը, ամենայն հավանականությամբ, սրբատեղի է (նկ. 1)։ Գտնված նյութերը թույլ են տալիս այն թվագրել 2-րդ հազարամյակի վերջով։ Դամբարանադաշտի դիմաց, Ահնիձոր տանող ճանապարհին, պահպանվել են ուղղանկյուն հատակագիծ ունեցող, մեծածավալ քարերից շարված կացարանների հետքեր, որոնք նույնպես նույն շրջանին են պատկանում (ռեգիստրացիոն չափագրությունները պահպանվում են հուշարձանների պահպանության և վերականգնման վարչությունում)։

Լորուտ գյուղի շրջապատը ընդհանրապես հարուստ է բրոնզեդարյան դամբարաններով։ Գյուղի մեջ և «Դարբնանց» ու «Ջոմնի դաշ» կոչված վայրերում ցայտուն ուրվագծվում են դամբարանները, որոնց արտաքին հետքերը կամաց-կամաց անհետանում են։ Գյուղից մոտ 15 կմ հեռու «Նազար դաղ» կոչված վայրում (2400 մ բարձրության վրա) պարզորոշ նկատվում են կրոմլեխների հետքեր։ Նույն շրջանի հետաքրքիր նյութեր են հայտնաբերվել Մարցում, Դսեղում։

Կիկլոպյան մի հետաքրքիր ամրոց գտնվում է Շամուտ գյուղի մոտ, բլրի վրա։ Միջին դարերում այն օգտագործվել է. նրա վրա կան մատուռի և գերեզմանոցի հետքեր։ Քննությունը ցույց տվեց, որ տեղում առկա են պարսպի մնացորդներ։ Բլրի ստորին մասում հայտնաբերվեց փայլեցված զարդերով մոխրագույն խեցեղեն։

Միջնադարյան հուշարձանները բաժանվում են մի քանի խմբերի։ Դրանց մեջ են մտնում ճարտարապետական առանձին կոմպլեքսներ (եկեղեցիներ, մատուռներ, տնտեսական և աշխարհիկ առանձին շինություններ), գյուղատեղիներ, գերեզմանոցներ և այլն։



Նկ. 2

Մամիկոնյանների վերջին շառավիղների շինարարական լայն գործունեության մասին են խոսում Դսեղ և Մարց գյուղերի շրջապատի հուշարձանները։ XII դ. սկզբներին Մամիկոնյան Մարծպան իշխանը և նրա որդի Գրիգորը իրենց նախաձեռնությամբ կառուցում են բարձրաքաշ ս. Գրիգոր վանքը (Դսեղում), որով ամբողջանում է համալիրը։ X դ. հավանաբար կառուցվել էր վանքի փոքր եկեղեցին, որը թաղակապ միանավ շինություն է՝ շարված անտաշ որձաքարերով։ 1221 թ. Մարծպան իշխանը նրա հարավային կողմից կառուցում է մի մեծ եկեղեցի (ս. Աստվածածին), որը միջնադարյան կառուցողական արվեստի խոշոր հաջողություններից է։ 1259 թ. Մարծպանի որդին՝ Գրիգորը, Աստվածածին եկեղեցուց հարավ կառուցել է տալիս մի հոյակապ գավիթ։ Հուշարձանը ներքուստ և արտաքուստ ունի ճոխ հարդարանք և բազմաթիվ արձանագրություններ (շինարարական-կառուցողական, նվիրատվական և այլն)։ Վանքի շուրջը գերեզմանոց է՝ XIII—XIV դդ. հիանալի խաչքարերով և տնտեսական (ձիթհան) ու բնակելի շինություններով։

ժամանակի ընթացքում կոմպլեքսը խարխլվել է, փլվել են բոլոր ծածկերը, պատերը թեքվել են դուրս և փլուզման վտանգի տակ են։ Նույնիսկ մասնակի մաքրման աշխատանքները, որ կատարվել են 1969 թ. ամռանը, հիմքերը չխախտելու համար հարկադրված դադարեցվել են[1]։

Այդ շրջանում կառուցված հուշարձաններից են նաև Դսեղ գյուղի բազիլիկան (VI—VII դդ., վերակառուցվել է XIII դ., ներկայումս այն վերածվել է Լոռու ազգագրական թանգարանի), փոքր մատուռը և Մարց գյուղի հուշարձանների մի մասը։

Մարց գյուղի Իգատակի եկեղեցին կառուցվել է 1255 թ., Մամիկոնյանների կողմից։ Իգատակում պահպանվել են կառույցների, մի քանի գերեզմանոցների մնացորդներ, խաչքարեր և այլ հուշարձաններ, որոնք թույլ են տալիս ասելու, որ գյուղատեղին եղել է Հյուսիսային Հայաստանի խոշոր բնակավայրերից մեկը։

Մարցի շրջապատում կան հուշարձաններ, որոնք գեղարվեստական տեսակետից մեծ նշանակություն ունեն։ «Ճգնավորի խաչ» կոչված վայրում կանգնեցված է պատվանդանով մի խաչքար, որն իր զարդամոտիվներով, պատկերներով և ճակատի արձանագրություններով Դսեղ գյուղի հանրահայտ «Խաչելություն» խաչքարի կրկնությունն է։ Խաչքարը կանգնեցվել է 1285 թ., Դսեղի խաչքարից չորս տարի հետո և քանդակվել է նույն վարպետի կողմից։ Ինչպես հայտնի է, Դսեղի խաչքարի վարպետն է Վահրամը, որի արձանագրությունը պահպանվել է խաչքարի պատվանդանի հյուսիսային կողմում։ Այդ հիանալի քարգործ վարպետի ձեռքի աշխատանքն են մի շարք խաչքարեր՝ Դսեղի և Մարցի շրջակայքում։

«Ճգնավորի խաչը» ժամանակին եղել է խոշոր գյուղատեղի։ Մինչև այժմ տեղում պարզորոշ նկատվում են բնակարանների և նույնիսկ փողոցների հետքեր։ Եղել է և եկեղեցի, որի հետքերը պարզորոշ նկատվում են «Խաչելություն» խաչքարի դիմաց։ Գերեզմանոցի խաչքարերն ունեն արձանագրություններ, որոնցից ամենահինը թվագրվում է 1170 թ.։

Մարց գյուղի շրջապատի խոշոր բնակավայրերից է «Մոտկոր» գյուղատեղին, որը գտնվում է Լորուտ տանող ճանապարհի աջ մասում, անտառի մեջ։ Գյուղատեղին, հավանաբար, հիմնվել է XI—XII դդ. և գոյատևել է մինչև XVII—XVIII դդ.։ Հիանալի կամուրջ է պահպանվել Մարց գետի վրա («Մոտկորի կամուրջ»), որն ունի բնական ժայռի ձևով կենտրոնական խել։ Կամրջի թռիչքները քանդված են, բայց հենակները կան, որոնք շարված են կանոնավոր տաշված քարերով (նկ. 3)։ Կամրջից սկսվել է ուղիղ ճանապարհ դեպի նույնանուն գյուղատեղին։ Գյուղատեղին լքվել է հանկարծակի, որովհետև տները մնացել են շատ կանոնավոր (քանդված վիճակում), պարզորոշ նկատվում են փողոցները։ Գյուղատեղիում, բարձունքի վրա նկատվում են մատուռի հետքեր։ Բնակավայրն ունեցել է մի քանի գերեզմանոց, որոնցից մեկը XII—XIII դդ. է։ Տեղում պահպանվել են խաչքարեր. դրանցից մեկը «թևավոր» խաչ է (աղ. I, 1)։

---

[1] 1969 թ. Հովհ. Թումանյանի 100-ամյա հոբելյանի կապակցությամբ Դսեղ գյուղի հուշարձանների մաքրման և վերականգնման մեծ աշխատանքներ տարվեցին։ Բարձրաքաշ ս. Գրիգոր վանքում մաքրվեց գավիթը, որի ընթացքում հայտնաբերվեցին ճարտարապետական մանրամասներ, արձանագրություններ, հիասքանչ քանդակներ և այլն (նկ. 2, 1—4)։

Աղյուսակ I

«Թևավոր» խաչերը շատ տարածված են եղել Հյուսիսային Հայաստանում։ Դրանք պատրաստվում էին ամբողջական զանգվածից։ «Թևավոր» խաչի ինքնատիպ մի օրինակ պահպանվել է Շամոտա գյուղի մոտ («Թևավոր ռեմ»), որի վրա կա Հաղբատի հիշատակությամբ արձանագրություն (աղ. I, 2)։ Կանգնեցման թվականը եղծված է։ Նույնպիսի խաչեր (3 հատ) կան Աթան



Նկ. 3

գյուղում՝ «Շահնարբեկ» գյուղատեղիում, մեկը՝ մատուռի արևելյան պատի մեջ ագուցված։ «Թևավոր» խաչերը խիստ ուշագրավ են հայկական մեմորիալ հուշարձանների ուսումնասիրության տեսակետից։ Դրանց բազմաթիվ նմուշները հանդիպում են Շահնազար, Կարմիր Աղեգի, Քորեր, Ցազգան և այլ գյուղերում։

Արշավախմբի արդյունքները գոհացուցիչ էին։ Հուշարձանների պահպանության և վերականգնման վարչության ցուցակներում ավելացվեց շուրջ 40 հուշարձան և կազմվեցին դրանց անձնագրերը։ Ռեգիստրացիոն չափագրություններ կատարվեցին Իգատակում, Ահնիձորում, Աթանում և այլուր, շուրջ 8 հուշարձաններում։ Արշավախումբը հավաքեց նաև արձանագրություններ։ Ահա դրանցից երկուսը։

1. ԵՍ ԳՐԻԳՈՐԻ ՈՐԴԻ ՄԱ-
ՐԾՊԱՆԱ, ԹՈՂԻ ՁԱ-
ԳԱԴԱԿՈ ՁՈՐՈՑՍ Ձ-
ԱՐԳԱՆՆ ԻՄ ՀԱՒՐՆ
ՀՈԳՈՑՆ, ԱՁԳԷ ՑԱ-
ՁԳ ԱՒԱԳԻՆ ԱՐԵՒՈ-
ՎՆ ԱՑՍ ԱՆԽԱՓԱՆ Է։
ՇԱՀՈՒՏՍ ՁԽԱՁՍ ԿԱՆ-
ԳՆԵՑԻ. ՁՄԵՋ ՑԻՇ-
ԵՑԷՔ ՎՆ ՔԻ։ ԱՌԱՁՆ-
ՈՐԴ ՇԱՀՈՒՏՆ ԷՐ
ԱՄԵՆԻ ՈՎ ԽԱՓԱՆԷ,
ՆԱ ՆՁՈՎԻ։ ԱՄԵՆ։ (աղ. I, 3)
ԹԻԱԿ[ԱՆՈՒԹԵԱՆ] ։ ՈՁԵ։

2. Ի Թ[ՈՒԱԿԱՆՈՒԹԵԱՆ]։ Հ[ԱՅՈՑ]։ ՈԺԹ։ ՅԱՆՈՒՆ

ԱՅ ԱՅՍ ԻՄ ԳԻՐ Է ԹԱՃ-	ԱՐ[ՈՒ]
ՐԻՍ, ՈՐ ՏՎԻ ԻՄ ԲԱ-	ՄՆ։...
ԺՆ ԱՅԳԵՂԻՍ ԴԵՂԾ-	ԱՒՐ Վ-
ՈՒՏԻՍ, ՈՐ ԱՅԼ ԱԲԳԱ-	ԵՅԿԷ Կ-
Ն ՁԱՌՈՒ ՈՉ ՈՎ	ՈՌ։ ՔՍ
ԹԷ ԻՄ ՁԱՒԱԿԻ ՏԱ-	ԱԾ ՁԹ-
Մ, ԹԷ ԻՄ ՅՈԳՈՅՍ Տ-	ԱՃԵՐԻ-
ԱՄ, ԱՅՍ ԱՅԼ ԽԱՓԱՆԻ	Ն ՅԱՆՑ-
ՈՉ ՈՎ ՈՐ ԽԱՓԱՆԵԼ ՁԱ-	ԱՆՔՆ
ՆԱՅ Ի ՅԻՄ ՀՈՂՔՆ ՍԵՎ-	ԹՈՂՈ-
ԵՐԵՍԱՒՔ ԳԱՅ։ ՈՒ Ի։	Ի, ՈՐ Ե-
ՅԺԸ։ ՀԱՅՐԱՊԵՏ-	ԹՈՂ Ձ-
ԱՅՆ ՆՁՈՎԵԱԼ ԵՂԻՑ-	ՄԵՐ Ա-
Ի, ԵՒ ՄԱՍՆ ՆՈՐԱՅ ԸՆԴ	ԲԳԱ-
ՅՈՒԴԱՅԻ, ԵՒ ԸՆԴ Խ-	ՆՍ։ Ձ-
ԱՁԱՀԱՆՈՒԱԾ	ԱՄԵ-
ԵՂԻՑԻ, ԵՒ ՄԵՔ Յ-	Ն։
ԱՍՏԱՏԵՅԱՔ Ի Տ-	(աղ. I, 4)

Առաջին արձանագրությունը Իդատակից է՝ մի խաչքարի վրա, որը գտնվել է 1957 թ. հողային աշխատանքների ժամանակ։ Թվականը՝ 1236, դրոշմված է խաչքարի մյուս երեսին՝ խաչի տակ։

«Իգատակ» տեղանվան հիշատակությունը «Ագադակ» ձևով հետաքրքիր է տեղանունների ստուգաբանության առումով։ Նույն «Ագադակը» հանդիպում է նաև Դսեղի ս. Գրիգոր վանքի գավթի ներսի արձանագրություններից մեկում, մի շարք բնակավայրերի անվանումների հետ միասին։ «Ագադակը» նույն «Այգետակի» ոճավորված ձևն է, որն ուշ շրջանում հանդես է գալիս «Իգատակ» ձևով (տեղական բարբառով՝ «Իքատակ»)։ Տեղանունների նման փոփոխությունները նկատվում են նույն շրջանում։ Օրինակ, Այգեհատ գյուղը կոչվել է նաև Իգահատ։

Արձանագրություններում հիշատակվող «աբգանը» ջրի հարկ է[2]։

Երկրորդ արձանագրությունը դրոշմված է «Ճգնավորի խաչ» գյուղատեղիի խաչքարերից մեկի մեջքին և հարավային կողին։ Խաչքարը համեմատաբար փոքր է, ունի շատ պարզ տեսք և զարդեր։ Արձանագրությունը 1170 թ. է և խիստ հետաքրքրություն է ներկայացնում վիմագրական և տեքստաբանական տեսակետից։

Երկու արձանագրություններն էլ անհայտ են ուսումնասիրողներին և հրատարակվում են առաջին անգամ։

---

2 «Նյութեր Հայաստանի գյուղատնտեսության և գյուղացիության պատմության», Երևան, 1964։

НОВЫЕ МАТЕРИАЛЫ ОБ ИСТОРИЧЕСКИХ ПАМЯТНИКАХ ТУМАНЯНСКОГО РАЙОНА

А. А. КАЛАНТАРЯН

Резюме

Летом 1969 г. экспедиция специальной научно-реставрационной мастерской побывала в Северной Армении, в малоизученном Марцском ущелье Туманянского района. Экспедиция выявила ряд археологических и историко-архитектурных памятников, датируемых с раннебронзовой эпохи до позднего средневековья.

Особенно интересные материалы обнаружены при осмотре средневековых селищ и поселений — хачкары, надгробные камни, строения, лапидарные надписи и т. д.

Все памятники и материалы подвергнуты научной документации, сфотографированы и сданы для хранения в архив Управления по реставрации и охране памятников при Госстрое Армянской ССР.